ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերi վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	**5**
1.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները բաշխվում են Դատարանների նախագահների խորհրդի կողմից սահմանված կարգով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	Առաջարկվում է 5-րդ մասով նախատեսվող արտոնությունը կիրառել օպերատիվ-	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

			հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների համար:	փոփոխություն:	
3.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	Առաջարկվում է ամրագրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործերի բաշխման կարգի վերաբերյալ դրույթ՝ կախված դատարանի տվյալ նստավայրի սպասարկման տարածքում գործող Հայաստանի Հանրապետության դատախազության համապատասխան ստորաբաժանումից քրեական գործը ստացված լինելու հանգամանքից:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	**ՀՀ կառավարություն**	7-րդ հոդված	Առաջարկվել է անցումային դրույթներում սահմանել, որ	**Ընդունվել է:** Կատարվել է	Ընդունվել է:

			Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարին նշանակում է Դատարանների նախագահների խորհրդի նախագահը:	համապատասխան փոփոխություն:	
5.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	Առաջարկվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացվող 129[2]-րդ հոդվածում պարզեցված վարույթի կարգով քննվող այլ գործերի համար ամրագրել նաև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետում գործին մասնակցող որևէ անձի առարկության բացակայությունը գործը պարզեցված վարույթի կարգով քննելու դեմ:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

6.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	Առաջարկվում է 129[2]-րդ հոդվածում որպես գործը պարզեցված վարույթի կարգով քննվելու արգելք ամրագրել նաև ոչ պատշաճ կողմի փոխարինման անհրաժեշտությունը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
7.	**ՀՀ կառավարություն**	3-րդ հոդված	Առաջարկվում է 129[5]-րդ հոդվածում կատարել փոփոխություն՝ պայմանավորված գործին մասկանակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը և դրանք հիմնավորող ապացույցները, ինչպես նաև միջնորդությունները ներակայացնելու համար՝ դատարանի կողմից ժամկետի երկարաձգմամբ:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: